

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Մարզարա համայնքի գյուղապետարանի 2014թ-ի հունվարի 1-ից մինչև 2014թ-ի հուլիսի 1-ը ընկած ժամանակահատվածում կատարած աշխատանքների վերաբերյալ

2014թ-ի տարեսկզբին Մարզարայի գյուղապետարանը կազմել է գյուղապետարանի 2014թ-ի բյուջեի նախագիծը և ներկայացրել է ավագանու քննարկմանը, որը հաստատվել է ավագանու կողմից, որով և առաջնորդվում են:

2014թ-ի բյուջեն կազմում է 29878,1 հազար դրամ:

Ներկայումս նախկին տարիների և ընթացիկ տարվա աշխատավարձի ու սոց վճարների, այլ պարտքեր չունենք:

2014թ-ի հուլիսի 1-ի դրությամբ համայնքի բյուջե է մուտքագրվել 12396,8 հազար դրամ այդ թվում՝

1. հողի հարկ 880,3 հազար դրամ 17,6 %
2. գույքահարկ 1396,0 հազար դրամ 66,5%
3. վարձակալական հողի հարկ 406,0 հազար դրամ 27,1%
4. ղոտացիա 9505,5 հազար դրամ 50,0%
5. Այլ մուտքեր 209,0 հազար դրամ 49,3 %

2014թ-ի առաջին կիսամյակում ծախսվել է 15667,5 հազար դրամ այդ թվում՝

1. Աշխատավարձ 4492,7 հազար դրամ
2. Սոցիալական ծախսեր 570,0 հազար դրամ
3. Ապրանքներ և նյութեր ֆոնդ բյուջեյից 1414,0 հազար
4. Այլ ծառայություններ 9190,8 հազար դրամ

2014 թ-ի առաջին կիսամյակում բյուջեյի ընթացիկ հաշիվներում ունենք 575.1 հազար դրամ գումար:

Առաջին կիսամյակի ընթացքում գյուղապետարանը անցկացրել է 5ավագանու նիստ 18 որոշումով, համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 8 որոշում և 11 կարգադրություն, մուտքագրվել է 86 գրություն, ելք է արվել 66 գրություն:

2014թ-ի առաջին կիսամյակում կատարվել է ներքոհիշյալ աշխատանքները՝

1. Ցուցաբերվել է 570,000/հինգ հարյուր յոթանասուն հազար/ դրամ սոցալական օգնություն համայնքի անապահով յոթ բնակիչներին:
2. «Մերձափնյա» ՋՕԸ-ին աջակցություն է ցուցաբերվել, ջրատարների մաքրման և ջրի վարձի հավաքագրման աշխատանքներին:
3. Սահմանապահների օրվա կապակցությամբ համայնքի տարածքում գտնվող հայկական ռուսական զորամասերին ֆինանսական օգնություն է տրամադրվել 100.000 /հարյուր հազար/ դրամ:
4. Վերջին զանգի կապակցությամբ ֆինանսական օգնություն է ցուցաբերվել, 100,000 /հարյուր հազար/ դրամ, 2014թ-ի շրջանավարտներին:
5. Գարնան ամիսներին կատարվել են ծառատունկ և կանաչապատման աշխատանքներ:
6. Մարգարայի գյուղապետարանը կազմակերպում է աղբահանման և ճանապարհների բարեկարգման ավագապատման աշխատանքներ:
7. 2014թ-ի գարնանային զորակոչի և զորահավաքի ժամանակ Մարգարա համայնքի կաղմից աջակցություն է ցուցաբերվել զորակոչի տարիքի բոլոր զինակոչիկներին Արմավիրի Զին-կոմիսարիատ ներկայացնելու համար:

8. Պարբերաբար, գյուղապետարանի կողմից, օգնություն է ցուցաբերվել համայնքի այն բնակիչներին, որոնց մոտ խնդիրներ են առաջացել փաստաթղթերի ձևակերպման և նոր փաստաթղթերի ձեռք բերման համար:

Հրատապ խնդիր է նաև համարվում մշակույթի տան վերանորոգումը, ինչպես նաև 1.5 կմ խմելաջրի ցանցի կառուցումը:

Սարգարա համայնքի
ղեկավար



/ Խ.Ասատրյան /